



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 14 ՌԵԿՏԵՄԲԵՐ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՅՈՎՀԱՆԱՆԵԱ 15:14-17

ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏ ՄԱՐԴՈՑ ՓԱՌՔԸ

Ռուբ իմ բարեկամներս էի,
եթէ գործադրէի ինչ որ կը պատուրեմ ձեզի:
Այլեւս ձեզ ծառայ չեմ կոչեր,
որովհետեւ ծառան չի գիտեր թէ ինչ կ'ընէ իր տէրը.
այլ՝ ձեզ բարեկամ կոչեցի,
որովհետեւ ինչ որ Հօրմէս լսեցի՝ ձեզի յայտնեցի:
Ռուբ չէ որ զիս ընտրեցիք,
այլ ես ձեզ ընտրեցի եւ նշանակեցի ձեզ՝
որ երթաք եւ պտղաբեր ըլլաք
եւ ձեր պտուղը մնայուն ըլլայ,
որպէսզի Հայրս տայ ձեզի
ինչ որ իմ անունովս խնդրէի:
Ռարձեալ կը պատուիրեմ ձեզի, սիրեցէի իրար:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխահիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆ ԵՐՈՒՄՆ ՈՒՂՂՈՒԲԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 3:1-9)



ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ (3:1-9)

Հեղափոխականությունն Պողոս Առաքելալի լեզուին մեջ կը հանդիպինք հակադրություններու, որով կ'ուզէ ըստ այնմ իր միտքը պարզել: Հակադրութիւն, որ նաեւ յապուկ է քրիստոնեայ անհապին, որ հոգիին եւ մարմինին միջեւ մնայուն պայքարի վիճակին արտայայտութիւնն է իր կեանքի ամբողջ րեւոյութեան:

Ընդհանուր բացատրութիւն մը փալէ ետք «հոգեւոր» եւ «շնչաւոր» եզրերու մասին, թէ ովքեր կրնան հասկնալ եւ ովքեր ոչ, աստուածային խորհուրդները: Հոգեւոր մարդը Աստուծոյ Հոգիով առաջնորդուող մարդն է, որ իր կեանքին մեջ ունի Հոգիին դրսեւորումները, եւ ըստ այնմ յապուկ ապրելակերպ, իսկ մարմնաւոր մարդը, որ Հոգիով չ'առաջնորդուիր, այլ՝ աշխարհային մրաձեւակերպով ու ցանկութիւններով ապրող մարդն է:

Այժմ կ'անցնի Կորնթոսի համայնքին այդ եզրերը օգտագործելու համար, ըսելով. «Սկիզբը չէի կրնար ձեզի խօսիլ այնպէս՝ ինչպէս պիտի խօսէի Աստուծոյ Հոգին ունեցող մարդոց հետ. այլ խօսեցայ այնպէս՝ ինչպէս պէտք էր խօսիլ աշխարհին պարկանող մարդոց» (1 հմր): Ոչ թէ որովհետեւ անոնք անկարող էին, այլ՝ որովհետեւ անոնք ի վիճակի չէին հասկնալու եւ գնահատելու փրութիւնը, այսինքն՝ աստուածային խորհուրդները: Անոնք փակաւին աշխարհին պարկանող մարդիկ էին: Անոնք փակաւին աշխարհիկ կը մրաձեւէին:

Անոր համար ալ «Քրիստոնէական հաւատքին մեջ դեռ երեխաներ, կաթ ջամբեց եւ ոչ թէ կերակուր, որովհետեւ չէին կրնար ուրել» (2 հմր): Այնպէս ինչպէս երեխաներու պարագային երբ փակաւին ափամներ չունի կարծր ուրելիքներ ուրելու, անոր համար ալ անոր կու փան հեղուկային, կաթ, որպէսզի անով կարենայ իր սնունդը ապահովել աճման համար: Նոյնպէս ալ հոգեւոր կեանքի պարագային Կորնթացիները այդպիսին էին սկզբնական շրջանին երբ առաջին առիթով Պողոս Առաքելալ հանդիպեցաւ անոնց քարոզելու: Աւերարանը եւ աւերարանալ ճշմարտութիւններն ու աստուածային խորհուրդները, որպէսզի կարենային անով իրենց հոգեւոր սնունդը ապահովելու: Առաքելալ իր այս մեթոքով կրցաւ փալ այն ինչ որ անհրաժեշտ էր իրենց համար, այնպէս ինչպէս երեխայի պարագային: Ուստի անոնց փրութիւնը այն ինչ որ հասարակն էր, փարրականը, դիւրըմբռնելին:

Ըստ երեւոյթին, սակայն, փարիներ են անցած «Բայց անոնք դեռ աշխարհին պարկանող մարդոց պէս կ'ապրին: Տակաւին իրենց մեջ եղող նախանձն ու հակառակութիւնը ցոյց կու փան որ դեռ մարմնաւոր են եւ աշխարհի չափանիշներով խորհող մարդոց պէս կը վարուին» (3 հմր): Ահա այսպիսի կացութիւն կը փրէր Կորնթոսի համայնքէն ներս, որ ուրիշ բան չէր եթէ ոչ սիրոյ կապի պակասը եւ խզումը: Առաւել եւս ապրիլ ոչ թէ Աստուծոյ կամեցածին համաձայն, այլ՝ անձին, եսին: Մանաւանդ երբ կը փորձէին այս կամ այն քարոզիչին անձին կապուիլ, փոխանակ՝ Աստուծոյ:

Որովհետեւ «վերջին հաշուով՝ Պողոսը ով է, Ապողոսը ով է. պաշտօնեաներ են՝ որոնց միջոցաւ հաւատացիք, եւ իւրաքանչիւրը պարզապէս կարարեց այն պաշտօնը որ Տէրը փրութիւն: Ես փնկեցի, Ապողոսը ջրեց. բայց Աստուած էր որ աճեցուց: Իւրաքանչիւրը իր աշխարհային համաձայն իր վարձատրութիւնը պիտի սրանայ» (5-8 հմր): Ահա անգամը յարակեցնելէ ետք Աւերարանի պարզամիտ ճիշդ ըմբռնումը, ու անոր բնոյթը, թէ ինչ է Աւերարանը, ինչպէս նաեւ քարոզելու կերպի մասին, հիմա կ'անցնի քարոզիչի պաշտօնին, դերին մասին խօսելու: Քարոզիչները Աստուծոյ պաշտօնեաներն են, որոնք կը կարարեն այն ինչ որ Տէրը փրութիւն է իրենց որ կարարեն:

Պողոս Առաքելալ կ'օգտագործէ մշակի օրինակը, փնկելու եւ ջրելու, բայց այս բոլորէն հետոյ աճեցնողն է կարեւորը Աստուած ինք: Պողոս Առաքելալ կ'ուզէ սորվեցնել Կորնթացիներուն, թէ Պողոսն ու Ապողոսը ուրիշ մէկը չեն, ոչ Տէրն են եւ ոչ ալ փրկիչը, այլ՝ Աստուծոյ սպասաւորները:

Խօսքին մաքակարարողները: Աստուծոյ խօսքը որպէս սերմնահատիկ ցանողն ու ջուրը փուռողը: Այսպէղ նաեւ Պօղոս Առաքեալ ցոյց կու տայ, որ այդ սերմնահատիկը իրը չէր, ինք չունէր, իրեն փրուեցաւ: Նոյնպէս ալ ջուրը փուռող ջուրը իրմէ չէր ջուրը ունեցաւ շնորհքի Ակէն: Միւս կողմէ, նաեւ իրենք ալ արժանիք մը չունին, որովհետեւ Աստուած ինք է աճեցնողը: Այս խօսքերը չեն թերագնահատէր Առաքեալին ու անոր գործակիցներուն աշխատանքը, բայց համեմատած Աստուծոյ ըրածին, իրենցը ոչինչ է: Չ'արժէր պարծանքի առարկայ ընել: Որովհետեւ ի՞նչ արժէ սերմը ցանուի, ջուրը փրուի, բայց չաճի: Տնկողն ու ջուրը փուռող գործակիցներ են ու պէտք է ըլլան եւ ոչ թէ մրցակիներ: Անոնք ինչպիսի ձիրքեր եւ կարողութիւններ ալ ունենան, չեն դադրիր Աստուծոյ պաշտօնեան ըլլալէ:

Բայց նաեւ քրիստոնէայ քարոզիչները **«Աստուծոյ գործակիցներ են»** մարդոց փրկութեան գործին մէջ. **իսկ հաւաքացեալները Աստուծոյ անդաստանն են եւ Աստուծոյ շինութիւնը, եւ ոչ թէ մերը»** (9 հմր): Այսպէղ նաեւ կը նշանակէ թէ կորնթացիները Աստուծոյ արդիւնքն են, եւ ոչ թէ քարոզիչներունը: Անոնք Աստուծոյ է որ կը պարկանին եւ ոչ թէ քարոզիչներուն: